Հայը միշտ սիրում է նմանել: Նա չէ պահպանում իր ինքնուրոյն, յատկանիշ առանձնութիւնները:

Ուխտաւորների մէջ լեզուները մինչեւ անգամ բաժանուած էին բարբառներով. մէկի խօսակցութիւնը միւսին համարեա անհասկանալի էր: Ցաւալին այն էր, որ շատերը խօսում էին այն ազգի լեզուով, որի լծի տակ ապրում էին, բոլորովին մոռանալով մայրենի խօսքը: Ինձ երեւում էր, իբր թէ այն բազմազան ամբոխի մէջ ազգային ամբողջութիւնը իսպառ քայքայուել էր, եւ քանդուել էին նրա մէջ միաւորիչ յօդերը...

Բայց մի կապ, որ դեռ պահպանուել էր, մի կապ, որ միաւորում էր այն խորտակուած ամբողջութեան զանազան կտորտանքը, մի կապ, որին չէր կարողացել խզել բռնակալի սուրը, դա էր՝ կրօնքը եւ եկեղեցին:

Բայց կարո՞ղ էր պահպանուել այս կապը միշտ անխզելի, իր աստուծային ամուր հաստատութեան մէջ, երբ նրա հոգատարներն էին՝ Կարապետ հայր սուրբի նման աբեղաներ եւ տէր Թոդիկի նման քահանաներ...

Եւ այժմ դառն մտածմունքներ պաշարում են ինձ, երբ ծագում է իմ գլխում այդ հարցը...

Սուրբ տիրամօր տօնախմբութիւնը մի կատարեալ տօնավաճառ էր, ուր գլխաւորապէս երկու դաս վաճառականներ հանդէս էին հանել իրանց մթերքը եւ կարծես, աննկատելի կերպով միմեանց հետ մրցութիւն էին անում:

Վաճառականների մի դասը բաղկացած էր վանեցի առեւտրականներից, իսկ միւսը՝ վանքի աբեղաներից:

Վանեցին դարսել էր հրապարակի վրայ զանազան տեսակ մանրուքներ, կանանց հասարակ զարդեր, գոյնզգոյն փարչաներ, մի խօսքով, այնպիսի խայտաճամուկ ապրանքներ, որոնք կարող էին հրապուրել գնողներին, եւ մինչեւ անգամ ամենախնայող ժլատի քսակից դուրս քաշելով մի քանի ղուրուշներ: Ծախողը կանգնած էր իր մթերքների մօտ եւ բարձրաձայն գովաբանում էր իր վաճառքի լաւ յատկութիւնները:

Անցնելով վանեցիներից, գալիս է աբեղա-վաճառականների կարգը, եւ քո առջեւ բացւում է մի ահագին հիմնարկութիւն՝ վանքը: Դա բովանդակում է իր մէջ մի հանդիսարան...

Մտնում ես վանքի գաւիթը: Այստեղ, վանքի դռան երկու կողմերից սկսած, մինը միւսի մօտ զուգահեռաբար նստած են «խեղճերը»: Նրանց երկու կարգ շարաւածքի միջով բացւում է մի քուչայ, որ տանում է դէպի վանքի դուռը: Նոյն քուչայով անցնում են ուխտաւորները: «Խեղճերիէ այլանդակո-